

րեւոյթը առաւ շոգհնաւը որուն նժարը կախուած էր լուսնէն, այն թաթը ուր թշուառ մարդկու- թիւնը կար վարը, խորը, մութին մէջ կը մնար. իսկ միւս թաթը ուր հարուստներ կային՝ վերը լուսոյ մէջ էր։ Անգամ մ'ալ նայեցայ վեր, լուսնին և հարցուցի թէ ո՞վ պիտի ըլլայ ան՝ որ այս կշիռին երկու թաթերը հաւասարեցնէ։

— «Մարդկային արդարութիւնը», պատաս- խանեց ան։

*

Բացօթեայ պատկողներուն մէջ նշմարեցի պա- տանի մը որ այլալիւծ գլուխը գետնէն վեր հա- նեց սարսափած. ապահով՝ առեկի երազ մը գինքը արթնեցած էր, և որ ասքերը լուսնին դիմաց չփեղով ոտքի ելաւ և կամաց կամաց ճե- մել սկսաւ, երբեմն երկչոտ նայուածքը նաւապե- տին ուղղելով։ Ես կարեւորութիւն չտուի անոր և միաբն նորէն սեւեռեցի լուսնին և աստղերուն, որոնք իրենց լուսութեամբ շատ բաներ կ'ըսէին ինծի և ես ազգերու բովանդակ ճակատագիրը անոնց մէջ կը կարդայի և Հայրենեաց սատղե- րը, սէ, կարմիր կը տեսնէի։

Եղաւ բոլակ մը որ սթափեցայ և ինծի մօտիկ տեսայ պատանին նոյն երկչոտ նայուածքով և որ գլուխը կէտ մը կախ ինծի նայեցաւ լուռ, տարապիտի գեղեցիկ դէմքին վրայ։ Ես ալ իրեն պէս սթափեցայ չեչտով մը խալերէն հարցու- ցի «Ո՞վ ես?»։ Ամբողջ մարմինս սարսուռ ելր ան ոչ մի պատասխան չտուաւ. անոր լուսնիւնը զիտ տանջեց և յանձիմանեց թէ ի՞նչպէս եւրո- պացի կը կարծեմ համետ, աղքատ և երկչոտ պատանին։ Նոյն սարսուռով հարցուցի մայրենի լեզուով «Ո՞վ ես?»։ Տեսայ արցունքով որ պա- տանիին աչքերը լեցունեցան, ան գինքը լուռ պա- հող շունը կ'լլեց և շրտաւ «Հայ եմ»։ — «Ա- տանայէն կու գամ» րտաւ ու գիտ հարուածեց։

Ահ, ես ի՞նչպէս այսքան առեն չէի նշմարած արիւնը անոր աչքերուն մէջ։ Կրակի, ոճիրի, թալանի երկրէն կու գար. այն երկրէն՝ որ լա- ցուց գմբէ երկար օրեր, միւր ամենէն երջանիկ օրերուն։ և որքան զառն է եղեր այն արցունքը վշտի և ցաւի՝ որ զուարթ սրտէն կը քամուի։

Ատանայէն կու գայ. բոցերը, հրացաններու շաշիւնները, առեկի ոճիրները, արիւնը իրեն- ներուն, դիակը իր ծնողաց, ողբերը վիրաւո- րուածներու, հառաչները հոգեվարքներու, այս ամէնքը իր մէջ տողորուած են, այս ամէնքը տակաւին իր հետ կը կրէ պատանին. հիմայ ծո- վուն շուրջ արին կը դառնայ աչքիս, երկնօրիս բոլոր աստղերը կը կարմրին, շոգհնաւին լոյսը հրդեհէ կը փոխուի, սա վարը պատկողները դիակներ կը թուին, և շոգհնաւը կարծես կը կքի այս ծանր մտածութիւններու տակ։ Ես որ պատկերի մը դիմաց այսքան կը խորանուիր, իրականութեան դիմաց սա պատանին ի՞նչպէս կ'ապրի։ Ապահովապէս այս ամէն մանրամաս- նութիւնը կը դիմաց մի հիւծեմ, և վստահ եմ որ փշիւրը երազին մէջ կ'ը քանի անգամ հանդիսա- տես կ'ըլլայ այս վայրագ արարքներուն և տա-

սափով վեր կը վերցնէ գլուխը իր ձեռքէ բար- ձէն։

— Ատանայէն կու գաս։ — Այո, պատաս- խանեց և արցունքի կաթիլներ սահեցան գու- նատ այտերէն վար. և ես անգթութիւն համա- րեցի այդ աւելուած երկրին մասին և և է հայր- ցում մ'ընելը։

— Դեպ ի ո՞ր կ'երթաս։

— Հոգս, հոն տանիկ չկայ, չէ։

— Ահ, չէ։ Ո՞վ կը զրկէ գրեզ հոն։

— Թէրգեան Գերապայածառը. — և նորէն այ- քերը լեցունեցան. գուշակեցի որ այս վայրկենիս անոր առջև պատկերուեցաւ քաջարի Եպիսկո- պոսին իրականացած վսեմ գաղափարին այ- րուիլը...

Պատանին շարունակեց։

— Տակաւին վարը երկու հայ ընտանիքներ կան։

— Անոնք ալ Հոռմ կ'երթան։

— Ոչ, անոնք Նաբոլի կ'երթան Ամերիկա մեկնելու համար։

«Ուրիշներ (սմանան և երկին Սահմանադրու- թենէն շլացած դէպ ի իրենց օճախը կը վերա- դառնան, ասոնք միևնոյն ժամանակ Ամերիկա կ'երթան բախտին հետ կուգնուր։ Ըսել է ոչ մի բովայն իրենց երկնքին վրայ արեւ չեն տեսած այդ թշուառները և չեմ ալ գիտեր թէ օտար երկին- քը արեւ ունի՝ ասոնց համար։ Զիրենք համոզել շանալը որ ետ դառնան՝ շարունակէն մ'է այս վայրկենիս, թող գէթ պատրանքի յուսով ժու- րէ տին այդ տխուր դէմքերը մինչև որ իրականու- թիւնը փոխանակուի»։ Կը խորհողածէի ես աչքերս գետին յառած։ Ու երբ գլուխս վեր վերցուցի ու պատանին նայեցայ՝ անիկա պաղաւտակն չեչտով մը խնդրեց ինձմէ։

— Երթամ գրեթե ալ կ'անչեմ։

— Այ, ոչ թող հանգիստ քնանան Ամերիկան երազելով, Արշալոյսին կը տեսնուինք. «Գիշերն արդէն իր սեւ ունի» խորհողածեցի։

Հ. Մ. Պոստոլսկու

Պուշկարիս շոգհնաւ

Յուլիս 10/23

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Բարոյական, Ռատմական, Արտեստական

— Ի՞նչ տարի 1909. — Բաժանորդագրու-

թեան պայմանները՝ Տարեկան 15 Ֆր.

ոսկի. 6 րբ.։ Վեցամսեայ՝ 8 Ֆր. ոսկի.

3 րբ.։ Մէկ թիւ կ'արժէ 1,50 Ֆր. 70 Կ.։

Հ ա ս ց է Rédaction de la Revue
«Handes» VII/2 Mechitharistengas-
se 4 Vienne (Autriche)